ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
26 ապրիլի 2024 թվականի N 40-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՏԱԳՆԱ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14- րդ հոդվածով

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝**

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 26-ի հերթական արտագնա նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին,

2. Աշխարհի և Եվրոպայի չեմպիոն, միջազգային կարգի սպորտի վարպետ, դյուցազնագրքի և գինեսի բազմակի ռեկորդակիր, Տաշիր համայնքի բնակիչ Արտյոմ Բագրատի Սոլոյանին ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին,

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը նվիրելու մասին,

4. «Տաշիր Ագրո» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված Բլագոդարնոյե բնակավայրում անասնագոմ N6 և կթարան N2 կառուցմանը նախնական համաձայնություն տալու մասին,

5. «Բի Էմ Սի Պրոջեքտ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Բլագոդարնոյե բնակավայրի վարչական տարածքում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ղարախաչի անդեզիտաբազալտի և հրաբխային ավազների հանքավայրում հանքարդյունահանման աշխատանքներին նախնական համաձայնություն տալու մասին,

6. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին,

7. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը դրամական միջոցներ տրամադրելու մասին:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024 ապրիլի 26
ք. Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
26 ապրիլի 2024 թվականի N 41-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածով, 76-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 94-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշումով հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը մրցույթով՝ վարձակալության իրավունքով տրամադրել օգտագործման:

2. Սահմանել հողամասերի վարձակալության վճարի մեկնարկային գները՝ համաձայն հավելվածի:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024 ապրիլի 26
ք. Տաշիր

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու
2024 թվականի ապրիլի 26ի N 41 -Ա որոշման

***Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի վարձավճարի չափն ու պայմանները***

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի ծածկագիրը | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի գործառնական նշանակությունը | Հողամասի չափը (հա) | Վարձակալու-թյան ժամկետը (տարի) | Վարձավճարի մեկնարկային չափը (դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տաշիր համայնք բնակավայր Դաշտադեմ | 06-032-0106-0001 | գյուղատնտեսական | խոտհարք | 0,13 | 10 | 2000 |
| 2 | Տաշիր համայնք բնակավայր Դաշտադեմ | 06-032-0102-0015 | գյուղատնտեսական | խոտհարք | 1.63 | 10 | 24500 |
| 3 | Տաշիր համայնք ք. Տաշիր | 06-008-0467-0213 | գյուղատնտեսական | վարելահող | 2.94433 | 10 | 74000 |
| 4 | Տաշիր համայնք բնակավայր Պաղաղբյուր | 06-090-0106-0004 | ջրային | ջրային | 5.99796 | 3 | 42000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ն. ՍՈԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
26 ապրիլի 2024 թվականի N 42-Ա

ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԻ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏ, ԴՅՈՒՅԱԶՆԱԳՐՔԻ ԵՎ ԳԻՆԵՍԻ ԲԱԶՄԱԿԻ ՌԵԿՈՐԴԱԿԻՐ, ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏՅՈՄ ԲԱԳՐԱՏԻ ՍՈԼՈՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ՉԵՄՊԻՈՆ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՐԳԻ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՊԵՏ, ԴՅՈՒՅԱԶՆԱԳՐՔԻ ԵՎ ԳԻՆԵՍԻ ԲԱԶՄԱԿԻ՛ ՌԵԿՈՐԴԱԿԻՐ, ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏՅՈՄ ԲԱԳՐԱՏԻ ՍՈԼՈՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 25-ի N 20-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N57-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով Արտյոմ Բագրատի Սոլոյանի դիմումը ( մուտք ՝ 25.03.2024-ի ՔԴ-341-24)՝

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝**

1. Բավարարել Արտյոմ Բագրատի Սոլոյանի դիմումը և նրան ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի բյուջեից տրամադրել 50000 (հիսուն հազար) դրամ ֆինանսական աջակցություն՝ Ռուսաստանի Դաշնության Մոսկվա քաղաքում անցկացվող պաուրլիֆտինգի Եվրոպայի առաջնությանը մասնակցելու համար:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024 ապրիլի 26
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ապրիլի 2024 թվականի N 43-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ, 595-րդ, 596-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Արարատ Էդիկի Դաղյանի դիմումը (մուտք ՝ 02.02.2024-ի ՔԴ159-24) և այն, որ Արարատ Էդիկի Դաղյանի ընտանիքը նախկինում չի օգտվել հողի սեփականաշնորհումից, չի ստացել (ձեռք բերել) տնամերձ կամ բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար հողամասեր.

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝**

1. Տաշիր համայնքին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26.01.2017-06-0024 վկայական, տրված՝ 26.01.2017-ին ), գ.Ապավեն, 1-ին փողոց, թիվ 42 հասցեում գտնվող 120.4 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տունը, 10.12 քմ մառանը և դրանց սպասարկման համար անհրաժեշտ 0.20754 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման (կադաստրային ծածկագիր՝06-016-0003-0010) հողամասը նվիրել Արարատ Էդիկի Դաղյանին, Անուշ Ջեվանշիրու Մաթևոսյանին, Էդուարդ Արարատի Դաղյանին և Արևիկ Արարատի Դաղյանին:

2. Նվիրառուներ Արարատ Էդիկի Դաղյանի, Անուշ Ջեվանշիրու Մաթևոսյանի, Էդուարդ Արարատի Դաղյանի և Արևիկ Արարատի Դաղյանի հետ կնքել նվիրատվության պայմանագիր:

3. Անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

4. Նվիրատվության մասին պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցման և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են նվիրառուների կողմից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024 ապրիլի 26
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ապրիլի 2024 թվականի N 44-Ա

«ՏԱՇԻՐ ԱԳՐՈ» ՓԱԿ ԲԵԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՆԱՍՆԱԳՈՄ N6 ԵՎ ԿԹԱՐԱՆ N2 ԿԱՌՈՒՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հնարապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N1325-Ն որոշման 28-րդ կետը և 02.04.2024-ի «Տաշիր Ագրո» փակ բաժնետիարկան ընկերության կողմից ներկայացված Բլագոդարնոյե բնակավայրում «Անասնագոմ N6 և կթարան N2 կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկման արձանագրությունը

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝**

1. Տալ նախնական համաձայնություն «Տաշիր Ագրո» փակ բաժնետիարկան ընկերության կողմից ներկայացված Բլագոդարնոյե բնակավայրում «Անասնագոմ N6 և կթարան N2 կառուցման իրականացմանը։

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒՊՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024 ապրիլի 26
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
26 ապրիլի 2024 թվականի N 45-Ա

«ԲԻ ԷՄ ՍԻ ՊՐՈՋԵՔՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲԼԱԳՈԴԱՐՆՈՅԵ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂԱՐԱԽԱՉԻ ԱՆԴԵԶԻՏԱԲԱԶԱԼՏԻ ԵՎ ՀՐԱԲԽԱՅԻՆ ԱՎԱԶՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐՈՒՄ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ՝

Ղեկավարվելով «Շրջական միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հնարապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետը և 10.04.2024-ի «Բի Էմ Սի Պրոջեքտ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Բլագոդարնոյե բնակավայրի վարչական տարածքում ՀՀ Լոռու մարզի Ղարախաչի անդեզիտաբազալտի և հրաբխային ավազների հանքավայրում հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկման արձանագրությունը

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝**

1. Տալ նախնական համաձայնություն «Բի Էմ Սի Պրոջեքտ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Բլագոդարնոյե բնակավայրի վարչական տարածքում ՀՀ Լոռու մարզի Ղարախաչի անդեզիտաբազալտի և հրաբխային ավազների հանքավայրում հանքարդյունահանման աշխատանքների իրականացմանը:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ          Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024 ապրիլի 26
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
26 ապրիլի 2024 թվականի N 46-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի մայիսի 23-ը, ժամը՝ 14:30-ին:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2024 ապրիլի 26
ք. Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, Վ.Սարգսյան 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
26 ապրիլի 2024 թվականի N 47-Ա

# «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության գործադիր տնօրեն Գագիկ Տարասյանի դիմումը, նկատի ունենալով որ «Տաք ծմեռ տարեցների համար» ծրագրի իրականացումը կլուծի ծրագրի շահառու տարեցների բնակարանների կոմունալ խնդիրները՝

**Տաշիր համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի բյուջեից «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը, որպես համաֆինանսավորում, տրամադրել 90000 (իննսուն հազար) դրամ:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ՄՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Գ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՅԱՆ
Ա. ՍՈՒԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2024 ապրիլի 26
ք. Տաշիր